

# Հարցականներ 1

Տրված է  $n$  երկարությամբ թվանշաններից և '?'-ներից կազմված տող. Պետք է '?'-ները փոխարինել թվանշաններով այնպես, որ ստացված թիվը բաժանվի տրված  $k$ -ի վրա և լինի մինիմալ, իսկ եթե չկա այդպիսի թիվ՝ տպել -1:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է  $t$  ( $1 \leq t \leq 10$ ) թիվը թեստերի քանակը:

Ամեն թեստի համար տրված են  $n$  և  $k$  ( $1 \leq n \leq 1000$ ,  $1 \leq k \leq 2$ ) բնական թվերը, որտեղ  $n$ -ը տրված թվի թվանշանների քանակն է և  $n$  երկարությամբ տող կազմված թվանշաններից և թվանշաններից:

## Ելքային տվյալներ

Տպել այն մինիմալ թիվը, որը բավարարում է վերը նշված պայմաններին և մինիմալն է, իսկ եթե չկա այդպիսի թիվ՝ տպել -1:

## Օրինակ

**Մուտք.**

2  
2 1  
4?  
2 2  
?3

**Ելք.**

40  
-1